ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 02/61-132367

«10» 03 2017 թ.

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ. ԱՅՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Այունց

Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրված 28.02.2017 թվականի N 01/04-1/670-17 և 01.03.2017 թվականի N 01/04-1/719-17 գրությունների՝ տեղեկացնում եմ, որ հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդի (այսուհետև նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովի 22.02.2017 թվականի ԳԲԽ-12/17 որոշումը՝ դադարեցվել է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 01.02.2017 թվականի ժամը 09:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և Էդգար Հովհաննիսյան Ա/Ձ-ին 2-րդ չափաբաժնի մասով հաջորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումն ու «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից՝ 2-րդ չափաբաժնի մասով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն Խորհրդի բողոքը քննող հանձնաժողովի 24.02.2017 թվականի ԳԲԽ-16/17 որոշման, դադարեցվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2017 թվականի ժամը 09:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացած որոշումը՝ «Սուր Արթուր» ՍՊԸ-ի մասով և որպես հետևանք՝ դադարեցվել է գնահատող հանձնաժողովի «Սուր Արթուր» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը: Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2017 թվականին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ, համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 51-րդ կետի, որոշում է կայացվել 26.01.2017 թվականին տեղի ունեցած գնահատող հանձնաժողովի

նիստի թիվ 2 արձանագրությամբ 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչված «Սուր Արթուր» ՍՊԸ-ին ծանուցում ուղարկել՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները:

Կից Ձեզ է տրամադրվում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության պատճենը:

Առդիր՝ 2 թերթ:

Վ. ՆԻԿՈՅԱՆ

Կատ՝ Գ. Չթրյան
Հեռ. 011514129

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Սարգսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մելքոնյան, Ա. Գաբրիելյան, Ժ. Ղարդաշյան, Փ. Շահմուրադյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Զալինյան

1. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարման վերաբերյալ հանձնաժողովի նիստ

(Ն. Սարգսյան)

1. **Փաստաթղթերի գնահատման՝**

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 10.03.2017թ.
-ժամը՝ 09:30

2. Հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդի (այսուհետև նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովի որոշումը (22.02.2017թ-ի ԳԲԽ-12/17 որոշում)՝ **դադարեցվում է** Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2017թ. ժամը 09:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և Էդգար Հովհաննիսյան Ա/Ձ-ին 2-րդ չափաբաժնի մասով հաջորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը /Խորհրդի որոշումը տեղադրված է www.gnumner.am կայքում/: **Հիմք ընդունելով վերոգրյալ որոշումը, գնահատող հանձնաժողովը որոշեց «Բարսեղյան եղբայրներ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից 2-րդ չափաբաժնի մասով:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

3. Առաջնորդվելով Խորդրի մեկ այլ որոշմամբ (24.02.2017թ-ի ԳԲԽ-16/17 որոշում) **դադարեցվում է** գնահատող հանձնաժողովի 01.02.2017թ-ի ժամը 09:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացած որոշումը՝ «Սուր Արթուր» ՍՊԸ-ի մասով և որպես հետևանք դադարեցնել գնահատող հանձնաժողովի «Սուր Արթուր» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը /Խորհրդի որոշումը տեղադրված է www.gnumner.am կայքում/: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովը ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև՝ Կարգ) 49-րդ կետի համաձայն 01.02.2017թ-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ չի արձանագրել անհամապատասխանություն «Սուր Արթուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 51-րդ կետով որոշեց էլեկտրոնային

եղանակով ծանուցում ուղարկվել 26.01.2017թ-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչված «Սուր Արթուր» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, այն է՝ մասնակցի կողմից ներկայացված Հավելված 3.1-ով նշված բոլոր պայմանագրերը ներկայացնել, ինչպես նաև ներյացնել նաև ռուսերեն լեզվով կնքված պայմանագրի հայերեն թարգմանության նոտարով հաստատված տարբերակը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝		Ն. Սարգսյան
Անդամներ՝		Ա. Մելքոնյան
		Ա. Գաբրիելյան
		Ժ. Ղարդաշյան
		Փ. Շահմուրադյան
Համակարգող՝		Մ. Զալինյան